ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 243-Ա

13 մարտ 2023 թվական | գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ «ՏԵԽՋՆՆՈՒՄ» ՍՊԸ-ԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի նոեմբերի 17-ի թիվ 199-Ն որոշման 1-ին կետի թիվ 1 հավելվածի, 1-ին կետի 14-րդ ենթակետի «դ» պարբերության դրույթներով և հաշվի առնելով «ՏԵԽՋՆՆՈՒՄ»ՍՊԸ-ի հայտը, որոշում եմ՝

1.Տալ «ՏԵԽՋՆՆՈՒՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ04445799) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրերում 2քմ ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ 2023 թվականի համար:

2.**Անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

13 մարտ 2023 թվական
գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 244-Ա

13 մարտի 2023 թվական                    գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ «ԲԷԷԿ 68» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի Նոյեմբերի 17-ի 199-Ն որոշման առաջին կետի թիվ 1 հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով «ԲԷԷԿ 68» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը՝ **որոշում եմ**

1.«ԲԷԷԿ» (ՀՎՀՀ 05557414) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրում սեղմված բնական գազի վաճառք իրականացնելու թույլտվություն 2023 թվականի համար:

2.Հաստատված թույլտվությունը սահմանված ժամկետում հայտատուին հանձնել միայն տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրը ստանալուց հետո:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**                    **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

13 մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

13 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 245-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-007-0005-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնող 08-007-0005-0022 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության տնամերձ հողամասը և դրա վրա առկա բնակելի տունը վերահասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Ջրաշինարարների բանավան, 2-րդ փողոց, 16 տուն»:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«13» մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 246-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-007-0627-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ 0,05339 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող 08-007-0627-0001 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում նոր առաջացած, 0,05339 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի, 13/3 հողամաս»:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«13» մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ

« 14 » մարտի 2023 թվականի թիվ 247-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 16-ի թիվ 20-Ա որոշումը՝

Որոշում եմ՝

1. 2023 թվականի ապրիլի 20-ին, ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի նիստերի դահլիճում անցկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Մրցույթի անցկացումից մեկ ամիս առաջ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am, Շիրակի մարզպետարանի և Ախուրյանի համայնքապետարանի պաշտոնական կայք էջերում հրապարակել հայտարարություն՝ մրցույթի անցկացման օրվա, տեղի, ժամի, հողամասերի գտնվելու վայրի, չափերի, կադաստրային ծածկագրերի, մեկնարկային գների, նախավճարների չափի, քայլերի չափի, օգտագործման նպատակի, ճանապարհների առկայության, հողերի որակական հատկանիշների և հողամասերի նկատմամբ սահմանափակումների մասին՝ համաձայն հավելված 2-ի:

3.Մրցույթը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 27-ի թիվ 86-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԻԳԻԹՅԱՆ

14 մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mail.ru , akhuryan.shirak@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ N 248-Ա
14 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 690-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով

Որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 680-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» թիվ 690-Ա որոշման վերնագրում «ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերը հանել:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ՈՐՈՇՈՒՄ N 249

<<15>> մարտի 2023 թվական գյուղ Ախուրյան

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 30.12.2022թ. թիվ 712-Ա որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 9-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ ս/թ-ի ապրիլի 11-ին Ախուրյան համայնքի Գետք բնակավայրում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ձնաբքի դեպքում» թեմայով:

Ուսումնավարժությունը ժամանակին նախապատրաստելու և արդյունավետ անցկացնելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Նշանակել՝

Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ – համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վ.Իկիլիկյան

Ուսումնավարժության արդյունքների ամփոփման խմբի պետ – աշխատակազմի քարտուղար ՝ Ս.Աբրահամյան

2. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

տարահանման հանձնաժողովը, կազմավորումների ղեկավարներին

3. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1)մշակել և մինչև 24.03.2023թ. իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը,

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը,

3)ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 10.04.2023թ.

4. Ուսումնավարժության մասնակիցներին՝

պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին

5. Սույն որոշումը ծանոթացնել ուսումնավարժության մասնակիցներին:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին

5. Սույն որոշումը ծանոթացնել ուսումնավարժության մասնակիցներին:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

15 մարտի 2023 թվական

Գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 250-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 2 ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՄԱՄԲ 08-071-0031-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԲԱԲԿԵՆ ՄԵԼԻՔԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Բաբկեն Մելիքի Կարապետյանը (ծնված 28/11/1938 թվական) դիմել է Ախուրյան համայնքի ղեկավարին՝ ժառանգության իրավունքով (հիմք նոտարական ակտ թիվ 543-20221227-84-6564014) իրեն պատկանող 08-071-0031-0002 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավելի օգտագործվող հողամասի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Ըստ օրենքի ժառանգության իրավունքով Բաբկեն Մելիքի Կարապետյանին փոխանցված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հովունի գյուղի 3-րդ փողոց, 2 տուն հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 88,64 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով շվաքարանը, անասնաշենքը և հացատունը կառուցվել են 1990-1998 թվականներին: Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Քաղաքացի՝ Բաբկեն Մելիքի Կարապետյանը, փաստացի տիրապետում և օգտագործում է 08-071-0031-0002 կադաստրային ծածկագրով, 0,26636 հեկտար մակերեսով օրինական և ավելի օգտագործվող հողամասը, ինչպես նաև դրա վրա

գտնվող ինքնակամ համարվող շենք շինությունները, որոնք օրենքով սահմանված կարգով համարվում են այն ֆիզիկական անձանց սեփականությունը, ովքեր տիրապետում են այդ գույքը՝ որպես սեփական գույք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածների և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման կարգի 8, 10, 11 և 22.1 կետերի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հովունի գյուղի 3-րդ փողոց, 2 տուն հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 88,64 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով շվաքարանը, անասնաշենքը և հացատունը համարել օրինական՝ առանց վճարների գանձման:

2. Ճանաչել Բաբկեն Մելիքի Կարապետյանի (ծնված 28/11/1938 թվական) սեփականության իրավունքը 08-071-0031-0002 կադաստրային ծածկագրով, 0,26636 հեկտար մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

3. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«15» մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«16» մարտի 2023 թվականի թիվ 251-Ա

Գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՒԹ ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 26-ի թիվ 75-Ա, 2022 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 225-Ա, 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 239-Ա և 2023 թվականի փետրվարի 16-ի թիվ 15-Ա որոշումները, որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման հավելվածով ըստ լոտերի ներկայացված հողամասերի օտարման նպատակով, 2023 թվականի ապրիլի 17-ին, ժամը 11:00-ին, Ախուրյանի համայնքապետարանի շենքում (հասցեն՝ Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Գյումրիի խճուղի, 42 շենք) կազմակերպել աճուրդ:

2.Աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական կայքէջում, Շիրակի մարզպետարանի պաշտոնական կայքէջում, Ախուրյանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում հրապարակել հայտարարություն՝ սակարկությունների անցկացման տեղի, օրվա, ժամի, հողամասերի գտնվելու վայրի, չափերի, կադաստրային ծածկագրերի, մեկնարկային գների, նախավճարների չափի, քայլերի չափի, օգտագործման նպատակի, ճանապարհների առկայության, հողերի որակական հատկանիշների, տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների մասին:

3.Հաստատել հրապարակային սակարկությունների հայտարարության տեքստը համաձայն հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«16» մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«16» մարտի 2023 թվականի թիվ 252-Ա

գ.Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՄԱՐՄԱՇԵՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-078-0013-0021 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.009856 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԳԱՌՆԻԿ ԳԱԳԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն համարվող երեք հողամասերն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու,օտարման մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 180-Ա որոշումը և 2023 թվականի մարտի 10-ին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքապետարանում կայացած հողամասի աճուրդով վաճառքի արդյունքների մասին 2023 թվականի մարտի 10-ին կազմված թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի (բնակավայր՝ Մարմաշեն) սեփականությունը հանդիսացող 08-078-0013-0021 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.009856 հեկտար հողամասը 80850 (ութսուն հազար ութ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով օտարել աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից, քաղաքացի՝ Գառնիկ Գագիկի Գալստյանին բնակվող՝ ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գյուղ Մարմաշեն, 7-րդ փողոց, տուն 2 հասցեում, ն/ք.՝ 012317442, տրված՝ 30.03.2021թ., 030-ի կողմից, հեռ. /077/13-77-18 և կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

2.Պարտավորեցնել գնորդին՝ սահմանված ժամկետում կատարել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«16» մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«16» մարտի 2023 թվականի թիվ 253-Ա

գ.Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԱԽՈՒՐԻԿ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-006-0082-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.03 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն համարվող երեք կտոր հողամասերն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու, օտարման մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 180-Ա որոշումը և 2023 թվականի մարտի 10-ին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքապետարանում կայացած հողամասի աճուրդով վաճառքի արդյունքների մասին 2023 թվականի մարտի 10-ին կազմված թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի (բնակավայր՝ Ախուրիկ) սեփականությունը հանդիսացող 08-006-0082-0004 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության 0.03 հեկտար հողամասը 133350 (մեկ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով օտարել աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից, քաղաքացի՝ Ռաֆիկ Հովհաննեսի Խաչատրյանին բնակվող՝ ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գյուղ Ախուրիկ, 8-րդ փողոց, տուն 6 հասցեում, անձնագիր՝ AT 0636484 տրված՝ 22.01.2021թ. 030-ի կողմից, հեռ. /044/41-13-91 և կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

2.Պարտավորեցնել գնորդին՝ սահմանված ժամկետում կատարել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«16» մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«16» մարտի 2023 թվականի թիվ 254-Ա

գ.Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԱԽՈՒՐՅԱՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-007-0052-0050 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.0024 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՍՏԵՓԱՆ ՌԱՖԻԿԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն համարվող հողամասերն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու,օտարման մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշումը և 2023 թվականի մարտի 10-ին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքապետարանում կայացած հողամասի աճուրդով վաճառքի արդյունքների մասին 2023 թվականի մարտի 10-ին կազմված թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի (բնակավայր՝ Ախուրյան) սեփականությունը հանդիսացող 08-007-0052-0050 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0024 հեկտար հողամասը 128000 (մեկ հարյուր քսանութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով օտարել աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից, քաղաքացի՝ Ստեփան Ռաֆիկի Կուրղինյանին բնակվող՝ ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Ջրաշինարարների Բանավան 3-րդ փողոց, 1/4 շենք, բն. 20 հասցեում, անձնագիր՝ AU 0259437, տրված՝ 06.05.2021թ. 030-ի կողմից, հեռ. /093/ 82-35-34 և կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

2.Պարտավորեցնել գնորդին՝ սահմանված ժամկետում կատարել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«16» մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mail.ru , akhuryan.shirak@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ N 255-Ա
17 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆ

## ԲԱՑԱՌԻԿ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԵՆԻԱՄԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 17 ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՐԱՆՇ 3-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով ՀայաստանիՀանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 1244-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի 883.10., 883.13.-883.15., 883.18.-883.23., 883.31. 883.52., 883.53., 883.81., 883.84. կետերը և ի կատարումն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 16-ի թիվ 43-Ա որոշման 3-րդ կետի պահանջների, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող, բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված, Բենիամին բնակավայրի տարածքում գտնվող 17 կտոր հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարել Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով օտարվող հողամասերի նկատմամբ իրավունքների փոխանցման նպատակով Հայաստանի Հանրապետության անունից, որպես ձեռք բերող հանդես եկող «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հետ կնքել հողամասերի առուվաճառքի պայմանագրեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

2023թ. մարտի 17-ին
գ.Ախուրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի
ղեկավարի 2023 թվականի մարտի 17-ի 255-Ա որոշման

Հայաստանի Հանրապետությանը օտարվող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող, Բենիամին բնակավայրի տարածքում գտնվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 3-ի շրջանակներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված հողամասերի ցանկը

| Հ/Հ | Գերակա շահ ճանաչված հողամասի ծածկագիրը | Նպատակային նշանակությունը | Առանձնացվող հողամասի ծածկագիրը | Օտարվող հողամասի մակերեսը (քառակուսի մետր) | Փոխհատուցման գումարը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | 08-027-0016-0004 | Բնակավայրերի | 08-027-0016-0009 | 68,32 | **180733** |
| 2. | 08-027-0017-0008 | Բնակավայրերի | 08-027-0017-0008 | 300,3 | **75976** |
| 3. | 08-027-0018-0001 | Բնակավայրերի | 08-027-0018-0019 | 183,49 | **46423** |
| 4. | 08-027-0041-0001 | Գյուղատնտեսական | 08-027-0041-0004 | 310,24 | **78491** |
| 5. | 08-027-0115-0001 | Գյուղատնտեսական | 08-027-0115-0016 | 21,29 | **14200** |
| 6. | 08-027-0545-0001 | Բնակավայրերի | 08-027-0545-0001 | 31,16 | **7883** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7. | 08-027-0560-0001 | Գյուղատնտեսական | 08-027-0560-0005 | 3,92 | **992** |
| 8. | 08-027-0560-0001 | Գյուղատնտեսական | 08-027-0560-0004 | 392,22 | **99232** |
| 9. | 08-027-0582-0001 | Գյուղատնտեսական | 08-027-0582-0004 | 101,94 | **25791** |
| 10. | 08-027-0003-0085 | Բնակավայրերի | 08-027-0003-0085 | 11,66 | **2950** |
| 11. | 08-027-0114-0001 | Գյուղատնտեսական | 08-027-0114-0077 | 25,46 | **16982** |
| 12. | 08-027-0122-0021 | Գյուղատնտեսական | 08-027-0122-0031 | 30,13 | **7623** |
| 13. | 08-027-0122-0021 | Գյուղատնտեսական | 08-027-0122-0032 | 359,95 | **91067** |
| 14. | 08-027-0546-0001 | Բնակավայրերի | 08-027-0546-0001 | 35,07 | **8873** |
| 15. | 08-027-0544-0001 | Բնակավայրերի | 08-027-0544-0004 | 1133,72 | **286831** |
| 16. | 08-027-0525-0001 | Բնակավայրերի | 08-027-0525-0001 | 35,48 | **8976** |
| 17. | 08-027-0110-0028 | Գյուղատնտեսական | 08-027-0110-0028 | 212,77 | **293623** |
| | Ընդամենը | | | 3257,12 | **1 246 646** |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«17» մարտի 2023 թվականի թիվ 256-Ա

գ.Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՄԱՅԻՍՅԱՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-077-0069-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 16.37839 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԲԱԲԿԵՆ ՌՈՒԲԻԿԻ ԿԱՐԱԽԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն համարվող ինը հողամասերն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու,օտարման մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 239-Ա որոշումը և 2023 թվականի մարտի 10-ին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքապետարանում կայացած հողամասի աճուրդով վաճառքի արդյունքների մասին 2023 թվականի մարտի 10-ին կազմված թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի (բնակավայր՝ Մայիսյան) սեփականությունը հանդիսացող 08-077-0069-0002 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության 16.37839 հեկտար հողամասը 16380000 (տասնվեց միլիոն երեք հարյուր ութանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով օտարել աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից, քաղաքացի՝ Բաբկեն Ռուբիկի Կարախանյանին բնակվող՝ ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գյուղ Մայիսյան, 6-րդ փողոց, տուն 2 հասցեում, անձնագիր՝ AU 0556827, տրված՝ 21.12.2021թ. 030-ի կողմից, հեռ. /094/40-40-49 և կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

2.Պարտավորեցնել գնորդին՝ սահմանված ժամկետում կատարել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«17» մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 257-Ա

«17» մարտ 2023 թվական — գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 711-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ մասի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով **որոշում եմ՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 711-Ա որոշման վավերապայմաններում կատարել հետևյալ փոփոխությունները

1.Որոշման վերնագրում «ԲԵՆՅԱՄԻՆ» բառը փոխարինել «ԲԵՆԻԱՄԻՆ» բառով:

2. «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ» բառերը փոխարինել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ» բառերով:

3. Որոշման վավերապայմաններում լրացնել ««17» մարտ 2023 թվական գյուղ Ախուրյան» թվերն ու բառերը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«17» մարտ 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 մարտի 2023 թվականի N 258Ա

Գյուղ Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 18/1 ՀԱՍՑԵԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 28-րդ, 30-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի 3.2-րդ կետի և 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված ցանկի 1-ին կետի դասակարգումների և հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականատեր Աշոտ Հարությունի Մինասյանի դիմումը, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի Հոլանդական թաղամաս, 5-րդ փողոց, 18/1 հասցեի հասարակական նշանակության շենքի գործառնական նշանակությունը փոխել բնակելի նպատակային նշանակության, բնակելի տուն գործառնական նշանակություն:
2. Որոշման 1-ին կետում նշված շենքով զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության, 08-007-0013-0047 կադաստրային ծածկագրով 0,0192 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման:
3. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները՝ գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«17» մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան